**Արձանագրություն N 3**

**Օդորակիչների ձեռքբերման « ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/97» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության**

ք. Երևան

07.06.2019թ.
ժամը՝ 10:30

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Լ. Սաղոյան /ԳԱՊ/ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ռ. Ղասաբօղլյան , Ա. Սուլյան |
| | Թ. Երկանյան , Ա. Հովակիմյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ի. Եղիազարյան |

**1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/97» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող բանակցությունների մասին**

---

(Լ. Սաղոյան)

Ընդունել ի գիտություն, որ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ «**ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/97**» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող գնային առաջարկների նվազեցման բանակցություններին ներկայացել է «Վեգա Ռինդ» ՍՊԸ-ի, ներկայացուցիչը՝ համապատասխան լիազորագրով:

Բանակցությունների անցկացման համար չափաբժիններ մասով սահմանվել է հինգ րոպե ժամանակահատված, որի ընթացքում մասնակցի կողմից ներկայացվել են նոր գնային առաջարկ, միայն առաջին չափաբաժնի մասով որը չի գերազանցել գնման առարկայի նախահաշվային արժեքը /հավելվածը 1.1 կցվում է/:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

**2. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին**

---

(Լ. Սաղոյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունված որոշումը՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/97» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել 1-ին չափաբաժնի մասով «Վեգա Ռինդ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

**3. Ընթացակրգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին**

---

1.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին ենթակետի:

1.3 Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

**4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին**

---

(Լ. Սաղոյան)

4.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

4.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել իրենց կողմից առաջարկվող ապրանքների՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը՝ համաձայն հրավերի 6.1 հավելվածի:

Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

**4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

---

(Լ. Սաղոյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հացեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------------------------- Լ. Սաղոյան

Անդամներ՝ ---------------------------- Ռ. Ղասաբօղլյան

---------------------------- Ա. Սուլյան

---------------------------- Թ. Երկանյան

---------------------------- Ա. Հովակիմյան

Քարտուղար՝ ---------------------------- Ի. Եղիազարյան

**Հավելված N 1**

**Օդորակիչների ձեռքբերման « ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/97» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բանակցությունների նիստի թիվ 3 արձանագրության**

ք. Երևան

07 հունիսի 2019թ.

ժամը 10:30

«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնային առաջարկների նվազեցման նպատակով բավարար գնահատված հայտեր ներկայացրած բանակցությունների ընթացքում՝ «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

| Գնման առարկայի անվանումը | ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳԻՆ ՀՀ դրամ | | ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՆՎԱԶԵՑՎԱԾ ԳԻՆ ՀՀ դրամ | | Ստորագրություն |
|---|---|---|---|---|---|
| | Առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ | Առանց ԱԱՀ | ներառյալԱԱՀ | |
| Օդորակիչ -1 | 162500 | 195000 | 150.000 | 180.000 | [signature] |
| | | | | | |

Մասնակցի անվանումը (անունը) (պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)